ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վ. Ս. ԵՐԿԱՆՅԱՆ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում։ Թոթափելով շահական լուծը, արևելահայությունը ներքաշվեց համառուսական տնտեսական ու հոգևոր կյանքի ոլորտը, հաղորդակցվեց ժամանակի առաջավոր գաղափարներին, գիտությանն ու լուսավորությանը և սկսեց գործնական քայլեր անել իր սեփական մշակույթի հետագա զարգացման համար։ Հատկապես XIX դարի երկրորդ կեսին արևելահայ հասարակությունը հոգևոր գործունեության ասպարեզում ձեռք բերեց խոշոր հաջողություններ։

Շնորհիվ ռուս իրականության հետ ունեցած կապերի, հայ մշակույթն ու նրա առաջադեմ գործիչները մոտիկից շփվեցին ռուսական հեղափոխական-դեմոկրատական մտքին, դարավերջից հաղորդակից դարձան մարքս-լենինյան գաղափարներին, անցան ռուսական հեղափոխությունների բովով։ Այս ամենը խորապես ազդեց հայ մշակույթի էության վրա, նպաստեց, որպեսզի ազգային լուսավորության ու ազատագրության ոգով ներծծված նրա արտահայտությունների մեջ նույնպիսի հնչեղություն ձեռք բերեն նաև սոցիալական ազատագրության գաղափարը, մարդը՝ իր բազմակողմանի ապրումներով ու հույզերով։

Մեծ է եղել ռուսական մշակույթի ազդեցությունը հայ մշակույթի զարգացման վրա։ Սակայն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ։ Կա Պուրիշկևիչների, Գուչկովների և Ստրուվեների վելիկոռուսական կուլտուրա,— բայց կա և վելիկոռուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով»[1]։ Պարզ է, որ ռուսական մշակույթի առաջադիմական, դեմոկրատական ավանդույթները և նրանց կրողները՝ Պուշկինն ու Լերմոնտովը, Գերցենն ու Բելինսկին, Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը, Գոգոլն ու Նեկրասովը, Գրիբոյեդովն ու Օստրովսկին, Ռիմսկի-Կորսակովն ու Չայկովսկին և շատ ուրիշ փայլուն դեմքերն էին, որոնց շնորհիվ ռուսական մշակույթն իրո՞ք բարերար ազդեցություն գործեց հայ մշակույթի վրա։ Այս հանգամանքը միշտ շեշտել ու գնահատել են հենց իրենք՝ հայ մշակույթի առաջադեմ գործիչները։ «Ինչ վերաբերում է հայ գրականության մեջ եղած ռուսական ազդեցության ընդհանուր հարցին,— գրել է Ս. Շահազիզը,— ապա նման ազդեցությունն ինձ թվում է խիստ բնական ու անխուսափելի փաստ, քանի որ ամբողջ ճշմարտապես տաղանդավորը, ուժեղն ու ինքնատիպը, որ ստեղծում է մի ամբողջ ժողովուրդ, իհարկե, չի կարող արձագանք չգտնել նրա հետ մշտական սերտ շփման մեջ ապրող մի այլ ժողովրդի մեջ»[2]։ Մի առիթով Կոմիտասը ասել է. «Ռիմսկի-Կոր-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 20։

2 Տե՛ս Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, էջ 428։

սակովի մի քանի երկերը և հարմոնիայի դասագիրքը ինձ համար սեղանի գրքեր են»[3]։ Հ. Թումանյանը ռուս գրականության մասին գրել է. «...սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև— Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»[4]։

Իհարկե, XIX դարի հայ գրականության, հասարակական-քաղաքական մտքի և մշակույթի զարգացումը պայմանավորված էր նաև համաշխարհային քաղաքակրթության ընդհանուր առաջընթացով, որին ենթակա էր նաև ռուսական իրականությունը։ Դարասկզբին արդեն առաջադիմական նոր պրոցեսներ սկսվեցին արևմտահայ կենտրոններում և հայկական գաղթօջախներում։ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հետևանքով Արևելյան Հայաստանում, չնայած ցարիզմի վարած գաղութային քաղաքականությանը, պայմաններն անհամեմատ ավելի նպաստավոր դարձան, ազդեցությունները՝ ավելի զորեղ, հնարավորությունները՝ ավելի մատչելի, որպեսզի մշակույթի զարգացումն ընթանա ավելի արագ տեմպերով, բարենպաստ միջավայրում և անխափան վերընթացի ուղիով։

Մտավոր աշխուժացումը, որ XIX դարի արշալույսին արդեն ընդգրկել էր հայ գաղթօջախները և Ռուսաստանի հայաբնակ վայրերը, հետապնդում էր քաղաքական-ազատագրական նպատակներ և դրանց հասնելու լավագույն միջոցը համարվում էր լուսավորությունը։ Օտար նվաճողների լծի տակ գտնված ժողովրդին դարավոր թմրությունից հանելու և նրան ազգային գիտակցության բերելու համար հայ մտավորականության առաջավոր գործիչները լծվեցին դիր ու գրականությունը ժողովրդի մեջ տարածելու առաջնահերթ խնդրի լուծմանը։ Արդեն դարի առաջին քառորդում հիմնադրվեցին մի շարք բարեկարգ դպրոցներ (Աստրախանի Ազարյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և այլն), կազմակերպվեց գրատպության գործը (Մոսկվա, Պետերբուրգ, Թիֆլիս, Աստրախան, Էջմիածին, Նոր Նախիջևան). հրապարակ եկան առաջին նոր դասագրքերն ու բառարանները։ Հին, խալֆայական դպրոցի սխոլաստիկ ուսուցման հաղթահարման մեջ խոշոր դեր խաղացին առաջին հայ լուսավորիչ-մանկավարժները՝ Հարություն Ալամդարյանը, Խաչատուր Աբովյանը, Մեսրոպ Թաղիադյանը։ Առաջնակարգ նշանակություն ստացավ պայքարը հանուն ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվի, ընդդեմ կղերաֆեոդալական վերնախավի մենաշնորհ դարձած գրաբարի։ Այդ ասպարեզում ամենից բարձր հնչեց Աբովյանի ձայնը, որն ավելի ուշ լայն արձագանք գտավ Ս. Նազարյանի ու Մ. Նալբանդյանի հրատարակած «Հյուսիսափայլում»։

Ժողովրդին լուսավորելու, նոր մանկավարժության մեթոդները կիրառելու հարցերը հատկապես մեծ արձագանք ստացան 1850—1860-ական թթ.։ Կապիտալիզմի մուտքը հայ իրականություն իր հետ բերում էր նոր երևույթներ, որոնց մեջ առաջնակարգ նշանակություն էր ստանում ժողովրդի ազգային հա-

---

3 Տե՛ս Ա. Թադևոսյան, Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1977, էջ 145։

4 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1969, էջ 242։

մախմբման ձգտումը։ «Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում ուղեկցվում էր վրաց, հայ և ադրբեջանական ժողովուրդների ազգային համախմբմամբ»[5]։ Իսկ նման պարագայում ժողովրդի լուսավորության խնդիրը կարևորագույն նշանակություն էր ձեռք բերում։ Ընդհանրապես մանկավարժության զարգացումը 1860-ական թթ. Ռուսաստանում հեղաշրջման տարիներ եղան շնորհիվ մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու եռանդուն գործունեության։ Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի դեմոկրատական ավանդույթների հետևորդ Ուշինսկու խոր հումանիստական, հայրենասիրական ու ժողովրդական մանկավարժության սկզբունքները հայ իրականության մեջ լայնորեն կիրառեցին Ս. Մանդինյանն ու Ղ. Աղայանը, Ն. Տեր-Ղևոնդյանն ու Առ. Բահաթրյանը և շատ ուրիշներ։

Ժողովրդական լուսավորության հրատապ խնդիրները լուծելու և ազգային մշակույթին դարկ տալու համար ամենից առաջ անհրաժեշտ էին կարող ուժեր։ Այս գործում արևելահայությանն անգնահատելի ծառայություն մատուցեցին Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Նախ Դորպատի, ապա՝ Մոսկվայի ու Պետերբուրգի, իսկ ավելի ուշ՝ Կազանի, Կիևի, Օդեսայի, Խարկովի, Վարշավայի բարձրագույն դպրոցներից դուրս եկած հարյուրավոր հայ երիտասարդներ դարձան լուսավորության ու մշակույթի անխոնջ գործիչներ։ Դորպատի համալսարանում կրթվեց նոր աղատագրված Արևելյան Հայաստանի ուսումնաձարավ երիտասարդների առաջին սերունդը, որի մեջ էին ապագա մեծ լուսավորիչ Խ. Աբովյանն ու հրապարակախոս-գիտնական Ս. Նազարյանցը։ Հատկապես մեծ է Լազարյան ճեմարանի դերը։ Լինելով մի կողմից հայկական միջնակարգ դպրոց, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի արևելագիտական խոշոր կենտրոն, Լազարյան ճեմարանը մեկ հարյուրամյակից ավելի տևած ժամանակաշրջանում հսկայական դեր է խաղացել հայ և ռուս ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման ու ծավալման գործում։ Այստեղ են կրթություն ստացել կամ մանկավարժական-գիտական գործունեություն ծավալել հայ մշակույթի բազմաթիվ նշանավոր դեմքեր ու քաղաքական գործիչներ (Հ. Ալամդարյան, Ս. Նազարյան, Ս. Շահազիզ, Մ. Նալբանդյան, Պ. Շանշյան, Քերովբե և Ռափայել Պատկանյաններ, Մ. Էմին, Գ. Խալաթյան, Ալ. Մյասնիկյան, Վ. Տերյան և շատ ուրիշներ)։ Ռուսական մշակույթի մի շարք ականավոր ներկայացուցիչներ կապված են եղել ճեմարանի հետ, այնտեղ են գործել ռուս խոշոր արևելագետներ Վ. Ֆ. Միլլերը, Ա. Ե. Կրիմսկին, Ֆ. Ե. Կորշը, Ա. Ն. Վեսելովսկին, Վ. Ա. Գորդլևսկին և ուրիշներ։ Ճեմարանը մշտական կապեր է ունեցել Մոսկվայի համալսարանի հետ, և նրա սաներից շատերը հետագայում ուսանել են այնտեղ։ Բավական է հիշատակել, որ միայն 1907—1916 թթ. Մոսկվայի համալսարանը տվել է 432 հայ շրջանավարտ՝ մեծ մասամբ իրավաբաններ ու բժիշկներ[6]։

Ռուսական համալսարաններում ու բարձրագույն կրթության այլ հաստատություններում սովորող հայ ուսանողները մոտիկից շփվում էին ռուսական առաջավոր մշակույթի ու հասարակական մտքի ներկայացուցիչների հետ,

---

5 «История СССР», т. II, М., 1965, էջ 390։

6 Տե՛ս Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 212։

յուրացնում նոր գաղափարներ, կազմակերպում էին ուսանողական «ժողովներ», որտեղ քննում և մշակում էին սեփական ժողովրդին լուսավորելու և ազատագրական պայքարի հանելու ծրագրեր։ Մոսկվայի համալսարանում Վ. Բելինսկու դասընկերն է եղել ու նրա ազդեցություն կրել ապագա կրթական ու թատերական գործիչ Սարգիս Տիգրանյանը։ Մ. Նալբանդյանի կապերը ժամանակի ռուսական հեղափոխական մտքի խոշորագույն ներկայացուցիչներ Գերցենի, Օգարյովի ու նրանց գաղափարակիցների հետ մեծապես նպաստեցին հայ իրականության մեջ հեղափոխական-դեմոկրատիզմի ձևավորմանը։

Հակառակ ցարիզմի հակաժողովրդական ու գաղութային քաղաքականության, առաջադիմական գաղափարները տարածվում էին կայսրության ծայրամասային ժողովուրդների, այդ թվում նաև արևելահայության շրջանում։ Մայրենի լեզվով մանուկներին կրթելու, դաստիարակությանը ազգային բովանդակություն հաղորդելու, կանանց դպրոցներ ստեղծելու, ուսուցումը դյուրամատչելի դարձնելու, մանկավարժական նոր մեթոդներ կիրառելու, դպրոցական նոր դասագրքեր ստեղծելու հայ լուսավորիչների ջանքերը տվեցին ցանկալի պտուղներ։ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շուրջ ծավալված պայքարը՝ հանուն դպրոցի աշխարհականացման, 1861 թ. ավարտվեց հաղթանակով և դրանից հետո ընդհանրապես հայ դպրոցների կառավարման ընտրովի հոգաբարձական սկզբունքն աստիճանաբար տիրապետող դարձավ։ Ներսիսյան դպրոցում, շնորհիվ նշանավոր մանկավարժ Պ. Շանշյանի ու նրա գործակիցների ջանքերի, մտցվեցին բնագիտական առարկաներ, որոնց ուսուցումն սկսեց տարվել հայերենով (մինչ այդ ոչ հայկական առարկաները դասավանդվում էին ռուսերենով), ստեղծվեցին մարմնական պատիժները, կատարվեց դաս-դասարանային բաժանում։

1868 թ. հայկական տարրական եկեղեցական-ծխական դպրոցն ստացավ առաջին կանոնադրություն, որը որոշակի կարգ ու կանոն էր հաստատում այդ դպրոցների կյանքում։ 1870-ական թթ. ազգային դպրոցներն սկսեցին տարածվել հայկական գավառում։ Երևան Լկան աղջիկների առաջին դպրոցները, որոնց ստեղծման գործում մեծ ջանքեր գործադրեց գրող Պ. Պռոշյանը։ Դրանցից Երևանի և Թիֆլիսի Գայանյան, Թիֆլիսի Մարիամյան—Հովնանյան, Ալեքսանդրապոլի Արղությանի դպրոցները հետագայում հասան միջնակարգի աստիճանի և նշանակալի դեր խաղացին ուսուցիչներ պատրաստելու գործում։ Կարևոր նշանակություն ձեռք բերեցին թեմական հոգևոր դպրոցները (Երևանի՝ 1837-ից, Շուշիի՝ 1838-ից, Նոր Նախիջևանի՝ 1881-ից, թեմական էր նաև Ներսիսյան դպրոցը՝ 1837-ից), որոնք, շնորհիվ առաջադեմ մտավորականության ջանքերի, փաստորեն վերածվել էին աշխարհիկ կրթական միջնակարգ հաստատությունների։ Կարևոր իրադարձություն էր 1874 թ. էջմիածնի Գևորգյան ճեմարանի հիմնադրումը, որը թեև հոգևոր բարձրագույն դպրոց էր, սակայն կարճ ժամանակում վերածվեց հայագիտական կարևոր կենտրոնի (այնտեղ են գործել հայ մշակույթի բազմաթիվ ականավոր ներկայացուցիչներ՝ Կոմիտասը, Վ. Սուրենյանցը, Ս. Մանդինյանը, Հ. Հովհաննիսյանը, Մ. Աբեղյանը, Կ. Կոստանյանը, Գ. Հովսեփյանը, Դ. Էդիլյանը և ուրիշներ) և խոշոր դեր խաղաց հայ մշակույթի զարգացման ասպարեզում։

Հայ մանուկների կրթության գործում զգալի դեր կատարեցին նաև պետական դպրոցները։ Դրանցից առավել կարևորներն էին Երևանի 1832 թ. բացված գավառային դպրոցը, որը հետագայում դարձավ գիմնազիա (այստեղ

1843—48 թթ. տեսուչ է եղել Խ. Աբովյանը), Երևանի Հռիփսիմյան իգական գիմնազիան (1850-ից), Երևանի ուսուցչական սեմինարիան (1881-ից), Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանը (1902-ից) և այլն։

Լուսավորության տարածման գործում զգալի դեր են կատարել զանազան կրթական ու բարեգործական ընկերությունները։ Դրանք ստեղծվում էին առաջադեմ մտավորականության նախաձեռնությամբ և նյութական ու բարոյական օժանդակություն էին ցույց տալիս դպրոցներին ու շքավոր աշակերտությանը, նպաստում էին գյուղական վայրերում դպրոցների տարածմանը, նոր դասագրքերի տպագրությանը և այլն։ Այդ ընկերությունների ջանքերով երևան եկան բազմաթիվ գրադարան-ընթերցարաններ, ստեղծվեցին դպրոցական գրադարաններ։ Արևելահայ իրականությունում հատկապես լայն գործունեություն ծավալեցին «Բաքվի հայոց մարդասիրական» (1864-ից), Թիֆլիսի «Կովկասի հայոց բարեգործական» (1881-ից) ընկերությունները։ Ստեղծվեցին նաև հրատարակչական գործին նպաստող մի շարք կազմակերպություններ, որոնցից նշանավորը 1880 թ. Թիֆլիսում կազմակերպված «Հայոց հրատարակչական ընկերությունն» էր։

Դարավերջին ծայր առած ցարական ռեակցիան փորձեց կասեցնել հայ ժողովրդի ծավալված կրթական շարժումը, հայկական դպրոցները նույնիսկ փակվեցին, սակայն ռուսական առաջին հեղափոխությունը և հայ ժողովրդի համառ դիմադրությունը կրկին կենդանություն հաղորդեցին դրանց, և դպրոցներն ավելի շեշտված աշխարհիկ բնույթ ստացան։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին միայն Անդրկովկասում գործում էր 400-ից ավելի հայկական դպրոց (դրանցից 185-ը՝ Երևանի նահանգում և Կարսի մարզում)։

Չնայած այս ամենին, չնայած դպրոցական ցանցի զգալի ծավալմանը և հայ կրթական գործիչների ու մտավորականության հսկայական ջանքերին, բուրժուակալվածատիրական կարգերի պայմաններում հնարավոր չեղավ իսկական ժողովրդական դպրոց ստեղծել և ժողովրդի մեջ լայնորեն գրագիտություն տարածել։ Այնուամենայնիվ ձեռք բերվեց կրթական մի որոշակի մակարդակ, որը հնարավորություն տվեց զարգացնելու ազգային մշակույթի այլևայլ ճյուղեր։

Մշակույթի զարգացման մեջ խոշոր դեր են խաղացել պարբերական մամուլը և նրա հետ սերտորեն կապված հրապարակախոսությունը։ Այդ դերն ավելի բարձրացավ դարի կեսերին, երբ հասարակական ուժերի ու գաղափարների բախումների ուժեղացման հետևանքով մամուլը հանդես եկավ որպես ժամանակի մտայնությունների ու քաղաքական պայքարի արտահայտիչ։ Արևելահայ իրականության մեջ այդ տեսակետից հատկապես մեծ դեր խաղաց Ս. Նազարյանցի խմբագրությամբ և Մ. Նալբանդյանի ակտիվ աշխատակցությամբ Մոսկվայում հրատարակվող «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858—1864)։ Անհաշտ պայքար մղելով հետադիմական-կղերական ուղղության դեմ, «Հյուսիսափայլը» պարզեց առաջադիմության, հայկական կյանքը բարենորոգելու, լուսավորության դրոշ։ Այս պայքարում «Հյուսիսափայլին» արձագանքում էր Կ. Պոլսում Հ. Սվաճյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մեղու» հանդեսը (1856—1874)։ Հայ մամուլի պատմության մեջ մեծ է նաև Գ. Արծրունու՝ Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի (1872-ից) նշանակությունը, որը կարևոր ավանդ ներդրեց հայ հասարակական մտքի և գրականության առաջընթացի գործում։ Հետաքրքիր է, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին

երևան եկան նաև մասնագիտական (գրական, մանկավարժական, բժշկական, գիտական, արվեստաբանական) թերթում ունեցող մամուլի օրգաններ, որոնք մեծապես նպաստեցին մշակութային կյանքի աշխուժացմանը։

XX դարի սկզբին լայն զարգացում ստացավ հատկապես հայկական մամուլը։ Միայն 1900—1920 թթ. լույս էին տեսնում մի քանի հարյուր հայերեն թերթեր ու ամսագրեր, որոնց տպագրության կենտրոններ էին դարձել նույնիսկ գավառական փոքրիկ քաղաքները։ Սակայն այս շրջանում ամենից նշանակալին եղավ հայ բոլշևիկյան մամուլի ծնունդը, որի ստեղծման մեջ մեծ դեր խաղացին Ս. Շահումյանը, Ս. Սալանդարյանը, Բ. Կնունյանցը, Ս. Կասյանը և այլ նշանավոր հայ հեղափոխականներ։ Նրանց հրատարակած «Պրոլետարիատ», «Կայծ», «Նոր խոսք» և այլ պարբերականները Լենինյան «Իսկրայի» ու «Պրավդայի» ավանդույթները ներմուծեցին հայ իրականություն և հսկայական դեր խաղացին աշխատավոր զանգվածների գաղափարական դաստիարակության և նրանց հեղափոխական պայքարին նախապատրաստելու գործում։

Նոր ժամանակների հայ մշակույթի մեջ որոշակի տեղ գրավեց գիտությունը։ Ճիշտ է, նրա զարգացման համար բուն Հայաստանում բացակայում էին ռեալ պայմանները, չկային գիտական հաստատություններ, նյութական օժանդակություն։ Սակայն, օգտվելով Եվրոպայի և հատկապես Ռուսաստանի բարձրագույն դպրոցի հնարավորություններից, հայ մտավորականությունը գիտության ասպարեզում որոշակի հաջողություններ ձեռք բերեց, հիմնականում գործելով Հայաստանից դուրս՝ Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, դարավերջին՝ մասամբ նաև Էջմիածնում։ Իսկ գիտական պատրաստություն ստացած այն մտավորականները, որոնք վերադառնում էին հայրենիք, մեծ մասամբ զբաղվում էին մանկավարժությամբ և գիտության նորագույն նվաճումների պրոպագանդմամբ (բժշկություն, գյուղատնտեսություն, բնագիտություն)։

Առանձնապես նշանակալի եղան հայագիտության տարբեր ճյուղերում ձեռք բերված նվաճումները։ Հայագիտությունն արդեն նախորդ շրջանում որոշակի հաջողությունների էր հասել Մխիթարյան միաբանների գործունեության և Եվրոպայի գիտնականների (Սեն-Մարտեն, Հ. Պետերման, Ֆ. Վինդիշման և ուրիշներ) ուսումնասիրությունների շնորհիվ։ Դարակեսին արդեն հայագիտության նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջանում նաև Ռուսաստանում։ 1842 թ. Ս. Նազարյանի ջանքերով հայոց լեզվի ամբիոն է ստեղծվում Կազանի համալսարանում, իսկ 1845 թ. հայոց, վրաց և ադրբեջաներեն լեզուների ամբիոն է բացվում նաև Պետերբուրգի համալսարանում, որը դառնում է արևելագիտության, այդ թվում և հայագիտության ճանաչված կենտրոն։ Նույն ժամանակ Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի ջանքերով հայագիտությունն արմատներ է գցում Մոսկվայում։ Էջմիածնում, Գևորգյան ճեմարանի հիմնադրմամբ և այնտեղ մի խումբ ճանաչված հայագետների համախմբմամբ, ստեղծվում է մի նոր հայագիտական կենտրոն։

Կապիտալիզմի զարգացումը, առաջադիմական գաղափարների տարածումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման առաջադրած խնդիրները նպաստեցին հայագիտության առաջընթացին, և արևելահայ իրականությունում այն նոր որակ ձեռք բերեց։ Աստիճանաբար հրաժարվելով հայ մշակույթի ստեղծած արժեքների միջնադարյան կրոնական նեղ մեկնաբանություններից և շարունակելով այդ արժեքները լույս աշխարհ հանել, հայագի-

տությունն անցնում է դրանց մանրադնին քննությանն ու նորովի արժևքավորմանը։ Այս ասպարեզում նշանակալի ներդրում կատարեցին Լազարյան ճեմարանի պրոֆեսորներ Մ. Էմինը, Ս. Նազարյանը, Գ. Խալաթյանը, ակադեմիկոս Մ. Բրոսսեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ք. Պատկանյանը, էջմիածնում գործող Գ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշներ։

Մխիթարյանների (Ս. Տերվիշյան, Ա. Այտընյան) և եվրոպական գիտնականների (Հ. Հյուբշման, Ա. Մեյե) հետ միասին լեզվաբանության մեջ մեծ հաջողությունների են հասնում արևելահայ գիտնականները (Ս. Պալասանյան, Ք. Պատկանյան, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան)։ Նրանք ստեղծում են արևելահայերենի քերականությունը, դնում բարբառների ուսումնասիրության հիմքը։

Զգալի նվաճումների է հասնում պատմագիտությունը։ Մի շարք պատմաբաններ շրջադարձ են կատարում դեպի նոր պատմության հարցերը (Կ. Եղյան, Ա. Երիցյան, Լեո), քննական մոտեցում են հանդես բերում հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցերի եկեղեցական մեկնաբանությունների նկատմամբ (Գ. Խալաթյան, Ն. Ադոնց), աշխատում են անդրադառնալ սոցիալ-տնտեսական խնդիրների լուսաբանմանը (Ս. Եղիազարյան), կատարվում են հայ ժողովրդի պատմության սիստեմատիկ շարադրանք ստեղծելու փորձեր (Ս. Պալասանյան, Լեո, Գ. Խալաթյան)։

XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին հայագիտության մեջ արագորեն ձևավորվում են մի շարք նոր ճյուղեր, որոնք ձեռք են բերում ինքնուրույն գոյության իրավունք։ Ռուս գիտնականներ Ն. Մառի, Ա. Իվանենկոյի, Յու. Սմիռնովի, Ն. Տոկարսկու, ինչպես նաև Ա. Երիցյանի, Թ. Թորամանյանի, Հ. Օրբելու և ուրիշների աշխատանքներով ծնունդ է առնում հայկական հնագիտությունը և սկիզբ է դրվում հայ միջնադարյան ճարտարապետական հուշարձանների գիտական ուսումնասիրությանը։ Գ. Սրվանձտյանցի, իսկ հետո նաև Ռ. Խալաթյանի, Ե. Լալայանի և մյուսների ջանքերով սկզբնավորվում ու բավական լայն ճանաչում է ստանում հայ ազգագրությունը։ Հենվելով Գ. Սրվանձտյանցի մեծ հայտնագործության՝ «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի հայտնաբերման վրա, Ռ. Խալաթյանը և ապա՝ Մ. Աբեղյանը դնում են հայկական էպոսագիտության հիմքը։ Գրականագիտությունը, որի սկզբնավորողը փաստորեն Մ. Նալբանդյանն էր, XX դարի սկզբին Լ. Մանվելյանի, Վ. Փափազյանի և հատկապես Մ. Աբեղյանի ուսումնասիրություններով նվաճում է գիտական ինքնուրույն ասպարեզի իրավունք։

Հայ փիլիսոփայական և տնտեսագիտական մտքի պատմության մեջ խոշոր ավանդ ներդրեց Մ. Նալբանդյանը, որը հեղափոխական դեմոկրատիզմի դիրքերից քննադատեց կապիտալիզմի արատները, սոցիալական անհավասարությունը, գտավ, որ պետք է դենքի ուժով տապալել տիրող կարգերը, նա քննադատեց ազնոստիցիզմը և բնության օրենքների ճանաչմանը մոտեցավ որպես մատերիալիստ։ Տնտեսագիտության մեջ հայտնի անուններ էին բուրժուական մտածողներ Գ. Արծրունին, Ա. Արասխանյանը, Ս. Գուլիշամբարովն ու Մ. Բունիաթյանը։

XX դարի սկզբի հայ հասարակական մտքի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ հայ մարքսիստ-լենինյանների՝ Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ալ. Մյասնիկյանի և մյուսների հրապարակախոսությունը, որը դասակարգային պայքարի մարքս-լենինյան ուսմունքի դիր-

քերից անդուլ պայքար էր մղում բուրժուական գաղափարախոսության ու նացիոնալիզմի դեմ, պատմական մատերիալիզմի տեսանկյունից վերլուծում էր հայ իրականության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի և գրականության երևույթները և մարքսիստական ճիշտ կողմնորոշում տալիս։

Բնական գիտությունների ասպարեզում թեև մեծ տեղաշարժեր չեղան՝ Հայաստանում նպաստավոր պայմանների բացակայության պատճառով, սակայն նրա սահմաններից դուրս հանդես եկան մի շարք գիտնականներ, որոնք ըգալի ավանդ ունեն գիտության մեջ։ Միջազգային լայն ճանաչման արժանացավ Անդրեաս Արծրունին՝ Ուրալի, Անդրկովկասի և մի շարք այլ երկրների երկրաբանական հետազոտությունների և հատկապես ֆիզիկական ու քիմիական բյուրեղագիտությանը նվիրված ուսումնասիրությունների շնորհիվ։ Ալ. Քալանթարը՝ անասնաբուծության, իսկ Ավ. Քալանթարը՝ կաթնամշակության գործում կատարած հետազոտությունների համար ճանաչված հեղինակություններ էին Ռուսաստանում։ Բժշկագիտության մեջ հայտնի էր Մ. Առուստամովի անունը, որը հսկայական ջանքեր է գործադրել Աստրախանում, Երևանում և Միջին Ասիայում ժանտախտի համաճարակը կանխելու գործում։ Բժշկագիտության մասսայականացման ու համաճարակների դեմ պայքարի կազմակերպման գործում ըգալի ավանդ են ներդրել բժիշկներ Դ. Ռոստոմյանը, Լ. Տիգրանյանը, Ավ. Բաբայանը, Բ. Նավասարդյանը, Վ. Արծրունին։

Հայ գրականությունը, որ դարերի ընթացքում փայլուն գոհարներ էր ստեղծել, բայց պատմության նոր ժամանակներին էր հասել ուժասպառ, դարձավ ժողովրդի հոգևոր մշակույթի հզոր լծակը և արձագանքեց կյանքի առաջադրած խնդիրներին, վերակառուցվեց, նոր շունչ ու ոգի առավ։

XIX դարի մուտքը հայ գրականությունը դիմավորեց կլասիցիզմի դիրքերում։ Ժողովրդին միջնադարյան թմրությունից արթնացնելու և ազգային ինքնագիտակցության բերելու ձգտումով այդ գրականությունը, որն ամենից ավելի ցայտուն արտահայտություն ստացավ Մխիթարյան բանաստեղծների ստեղծագործության մեջ, ձևոք զարկեց հայոց պատմության մոռացված փառավոր անցյալը վերակենդանացնելուն։ Սակայն հայկական կլասիցիզմը, որ պարուրված էր կրոնական մտայնությամբ և ազգային-հայրենասիրական իդեալների իրագործման մեջ ապավինում էր աստվածային նախախնամությանն ու նիրհում «գրախտ Հայաստանի» դափնիների վրա, շուտով զզացնել տվեց իր սահմանափակությունը և չկարողացավ բավարարել հայկական կյանքում ծավալվող զարթոնքի պահանջներին։ Նրան փոխարինելու եկավ գրական նոր ուղղությունը՝ ռոմանտիզմը, որը դրեց հայ գրականության դեմոկրատացման, ժողովրդայնացման, ժանրային վերաձևումների սկիզբը։

Անցումը կլասիցիզմից ռոմանտիզմին արևելահայ գրականության մեջ իր առաջին արտահայտությունն ունեցավ Հ. Ալամդարյանի և Մ. Թաղիադյանի ստեղծագործություններում։ Սակայն գրական-լուսավորական շարժման ամենամեծ ու համապարփակ դեմքը Խ. Աբովյանն էր։ Նա առաջինն էր, որ լայնորեն դեմոկրատացրեց գրականությունը, դրա մեջ մտցրեց ժողովրդական մտածողություն, պատմական թեմատիկայից շրջադարձ կատարեց դեպի առօրյա կյանքը, որպես գրականության գլխավոր հերոս հայտնաբերեց ու շնչավորեց ժողովրդի մարդուն, ժողովրդի կենդանի լեզուն դարձրեց գրականության լեզու։ Վառ հայրենասիրությամբ ներծծված «Վերք Հայաստանին» հայ գրականության առաջին իսկական վեպն էր։ Այս ամենով Աբովյանը եղավ հայ նոր

գրականության հիմնադիրը և նախանշեց նրա զարգացման ուղին։ Այդ ուղիով գնաց մեծ հեղափոխական Մ. Նալբանդյանը, որի ազատության ազդու կոչը լայն արձագանք տվեց հայ հոգևոր կյանքի բոլոր անդաստաններում, իսկ նրա գեղարվեստական արձակի ու գրական քննադատության փայլուն նմուշները դարձան ռեալիզմի սկզբնավորման նախանշանները հայ գրականության մեջ։

1850—1860-ական թթ. Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքի վերելքը նոր խթան հանդիսացավ հայ գրականության զարգացման համար։ «Նախ քաղաքացի և ապա պոետ» նշանաբանով հնչեց Ս. Շահազիզի հայրենասիրական-քաղաքական քնարը, Ռ. Պատկանյանն իր ազատաշունչ բանաստեղծություններով ռազմի կոչ արեց ժողովրդին, իսկ Հ. Հովհաննիսյանը, որ հաջորդեց նրանց, իր բյուրեղյա քնարերգությամբ հարստացրեց հայ պոեզիան, կատարելագործեց նրա արվեստն ու լեզուն։ Նոր նվաճումներ ունեցավ արձակը, որ դարի վերջին տասնամյակներում տիրապետող դիրք գրավեց հայ գրականության մեջ։ Գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Ռաֆֆին իր վեպերով ու պատմվածքներով մի նոր աստիճանի հասցրեց հայ գրականությունը, եղավ ժողովրդի ազգային ազատագրության իդեալների լավագույն արտահայտիչը, պատմավիպագրության սկզբնավորողը։ Հայ գյուղն իր բազմաթիվ հոգսերով ու սոցիալական հակասություններով, կեղեքիչների դեմ գյուղացիության տարերային պայքարի դրսևորումներով գեղարվեստական կերպավորում ստացավ Պ. Պռոշյանի վեպերում։

Ռեալիզմի սկզբունքները գնալով տիրապետող դարձան հայ գրականության մեջ։ Հատկապես նշանակալի էր դրամատուրգիայի մեջ դեռևս հարատևող կլասիցիզմի նկատմամբ ռեալիզմի տարած հաղթանակը, որում վճռական դեր խաղաց «Հայկական Օստրովսկին՝ Դ. Սունդուկյանն իր անմահ կատակերգություններով։

Սոցիալական միջավայրի ու մարդու փոխհարաբերության խնդիրն ավելի խոր արտացոլում է գտնում դարավերջին՝ բուրժուական հարաբերությունների և դասակարգային պայքարի խորացման պայմաններում։ Հայ գրողները (Ալ. Շիրվանզադե, Նար-Դոս, Մուրացան, Վրթ. Փափազյան) ավելի սուր քննադատության են ենթարկում տիրող հասարակարգը, ավելի համարձակ ու համոզիչ կերպով հակադրում հասարակության տարբեր խավեր ներկայացնող հերոսներին։ Առանձնապես նշանակալի եղավ Շիրվանզադեի ստեղծագործությունը, որը հեռու մնալով ժամանակի Ֆոդալական դարձած անկումային գրական ուղղություններից և յուրացնելով Բալզակի ու Տոլստոյի ստեղծագործական փորձը, քննադատական ռեալիզմի դիրքերից անդրադարձավ բուրժուական աշխարհը բզկտող սոցիալական խնդիրներին։

XX դարի սկզբին հայ գրականության մեջ կրկին իշխող դարձավ պոեզիայի ժանրը։ Հայ մեծագույն բանաստեղծները՝ Հ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանն ու մյուսները իրենց ստեղծագործության հիմքում դնելով մարդուն՝ իր բազմակողմանի ու խոր ապրումներով, ազնիվ քաղաքացիականություն հաղորդեցին գրականությանը և սոցիալական չարիքի ու ազգային ճնշման դեմ ըմբոստանալու կոչով նոր աստիճանի բարձրացրեցին հայ պոեզիան։ Հ. Թումանյանը, որ ժամանակի ոգու ամենամեծ արտահայտիչն էր, դարձավ գրական ամբողջ շարժման առաջատարը, ժողովրդի ամենից սիրված բանաստեղծը. Ավ. Իսահակյանը, որ սիրո անզուգական երգիչ էր նաև, իր «Աբու-Լալա-Մահարի» պոեմով հայ գրականությանը համաշխարհային ճա-

նաչում բերեց. անկրկնելի լուսավոր մի թախիծով մթնշաղի անուրջներ երգող Վ. Տերյանը երգեց նաև Հոկտեմբերյան ազատության կարմիր դրոշը։

Դարասկզբին, ռուսական առաջին հեղափոխության փոթորիկների միջից ծնունդ առավ նաև հայ պրոլետարական գրականությունը. Հ. Հակոբյանը և ապա Շ. Կուրղինյանը փառաբանեցին բանվորին, աշխատանքի մարդուն, պայքարի ու հաղթանակի կոչեցին նրանց ընդդեմ ցարիզմի ու բոլոր շահագործողների։ Դա թարմ ու նոր խոսք էր հայ պոեզիայում, որին առաջիկայում մեծ ապագա էր սպասում։

XIX դարում ծնվեց նաև հայկական նոր թատերական արվեստը։ 2000-ամյա ուղի անցած հայ թատրոնը, որ անբարենպաստ պայմանների պատճառով անհետացման վտանգին էր ենթարկվել, XIX դարի առաջին կեսին, քաղաքական ու հասարակական վերելքի ազդեցության տակ սկսում է վերակենդանանալ՝ ընդունելով նախ աշակերտական ներկայացումների տեսք։ Մխիթարյանների ու Կ. Պոլսի դպրոցների, ապա նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտները, Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները կազմակերպում են ներկայացումներ, որոնք արժանանում են Մ. Նալբանդյանի սեռեռուն ուշադրությանը։ 1840-ական թթ. արդեն Թիֆլիսում կազմակերպվում է տնային սիրողական թատրոն։ Երևան են գալիս կենցաղային առաջին կատակերգությունները։ Մամուլում աշխույժ բանավեճ է սկսվում թատրոնի շուրջը։

1863 թ. Պ. Պողոշյանի, դերասան Մ. Ամերիկյանի և մի խումբ առաջադեմ գործիչների ջանքերով Թիֆլիսում ծնունդ է առնում հայկական պրոֆեսիոնալ թատերախումբը, որի գործունեության մեջ վճռական դեր են խաղում թատրոնի անխոնջ մշակ Գ. Զմշկյանն ու դրամատուրգ Գ. Սունդուկյանը։ Մեծապես աղդվելով ռուսական թատրոնի ռեալիստական ավանդույթներից, այդ թատերախումբն ապահովում է ռեալիստական արվեստի հաղթանակը հայ թատրոնում, որը Թիֆլիսում գնալով ավելի լայն ծավալ է ստանում։

Ազգային երաժշտության ասպարեզում ևս որակական մեծ փոփոխություններ տեղի ունեցան. ծնվեց ժամանակակից երաժշտության սկզբունքների վրա կառուցված հայկական նոր երաժշտությունը՝ իր բազմազան արտահայտչաձևերով։ Դարակեսից արևելահայ երաժշտությունը գնաց անխափան վերելքի ուղիով և հասավ մեծ հաջողությունների։ Այդ գործում խոշոր նշանակություն ունեցավ մերձավոր շփումը ռուսական փայլուն երաժշտական մշակույթի հետ։ Արևելահայ երաժիշտների մեծ մասն անցավ Պետերբուրգի կոնսերվատորիայի հիանալի դպրոցը և ռուսական երաժշտության լավագույն ավանդույթներով զինված զարկ տվեց ազգային երաժշտության զարգացմանը։ Թիֆլիսը, որտեղ 1871 թ. կազմակերպվել էին «Կովկասյան երաժշտական ընկերությունն» ու երաժշտական դպրոցը և որտեղ գործունեություն էին ծավալել ռուս նշանավոր կոմպոզիտորներ Մ. Բալակիրևը, Մ. Իպոլիտով-Իվանովը, Ն. Կլենովսկին, դարձավ հայ երաժշտական կյանքի կենտրոնը։ Այստեղ գործեցին կոմպոզիտորներ Ք. Կարա-Մուրզան և Մ. Եկմալյանը, որոնք հսկայական ներդրում կատարեցին հայ երաժշտության մեջ արմատացած միաձայնությունից բազմաձայնության անցնելու, հայ ժողովրդական երգերի մշակման և երգչախմբային արվեստը տարածելու ուղղությամբ։ Կոմպոզիտոր Ն. Տիգրանյանն առաջինը գործիքային մշակման ենթարկեց արևելյան մուղամները, եղավ հայկական դաշնամուրային երաժշտության սկզբնավորող-

ներից մեկը։ Ա. Տիգրանյանն ստեղծեց հայկական առաջին ժողովրդակենցաղային «Անուշ» օպերան։ Ալ. Սպենդիարովը դրեց հայկական սիմֆոնիզմի ամուր հիմքերը և ազգային երաժշտությունը հարստացրեց երաժշտական միանգամայն նոր կերպարներով ու արտահայտչամիջոցներով։

Սակայն այն, ինչ կատարեց հանճարեղ Կոմիտասը, վեր էր բոլոր ակնկալումներից։ Նա հայ երաժշտությունը մաքրեց դարերի ընթացքում նրա մեջ կուտակված օտար տարրերից և գիտական հիմնավոր փաստարկներով ապացուցեց աշխարհին նրա ինքնատիպությունն ու ինքնուրույնությունը։ Նա ստեղծեց ազգային երաժշտական ոճի դասական օրինակներ, հիասքանչ երգեր ու խմբերգեր, գործիքային ստեղծագործություններ, փայլուն «Պատարագը», եղավ հայ երաժշտական ազգագրության գիտական ուսումնասիրության հիմնադիրը։ Կոմիտասի սիրանքն ու ստեղծագործությունն անջնջելի հետք թողեցին հայ երաժշտական մշակույթի վրա և կանխորոշեցին նրա զարգացման հետագա ընթացքը։

Արմատական փոփոխություններ կրեց հայկական կերպարվեստը։ Դա ամենից առաջ արտահայտվեց նախորդ շրջանում տարածում գտած որմնանկարչությունից հրաժարումով և հաստոցային գեղանկարչության արմատավորումով, միջնադարյան նկարչության կանոնիկ դարձած սահմանների վերացումով։ Զարգացան կերպարվեստի բոլոր հիմնական ճյուղերը։ Հայ նկարիչների ձևավորմանն ու ստեղծագործական աճին մեծապես նպաստեցին Մոսկվայի ու Պետերբուրգի գեղարվեստական դպրոցները, շփումները ռուսական ռեալիստական արվեստի խոշորագույն ներկայացուցիչների հետ։ Միայն Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը սովորել են երեսունից ավելի հայ նկարիչներ, որոնք էլ մեծ մասամբ դարձել են հայ կերպարվեստի նշանավոր դեմքեր։

Դրանցից առաջիններից էին Հ. Քաթանյանն ու Աղ. Հովնաթանյանը, որոնք սկզբնավորեցին հայկական գրաֆիկական արվեստը։ Դիմանկարչության սկզբնավորմանը նպաստեց Հովնաթանյան հռչակավոր նկարիչների տան ներկայացուցիչ Մ. Հովնաթանյանը, որի որդին՝ Հակոբը, արդեն կապվելով Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի հետ, դարձավ հայկական նոր դիմանկարչության հիմնադիրը։ Նույն ակադեմիայի սաներ Ստ. Ներսիսյանը և Հ. Շիշմանյանը հայ արվեստում սկզբնավորեցին ժանրային նկարչությունը։

Ռուս և հայ արվեստի պատմության մեջ հսկայական է մեծ ծովանկարիչ Հ. Այվազովսկու դերը։ Բազմաթիվ կապերով կապված լինելով ռուսական իրականությանը, Այվազովսկին կատարելության հասցրեց համաշխարհային ծովանկարչությունը և մեծ ազդեցություն ունեցավ հայ և ռուս մի շարք նկարիչների ստեղծագործության վրա։ Միաժամանակ Այվազովսկին առաջինն էր, որ անդրադարձավ հայկական բնաշխարհի պատկերմանը, ցասկոտ հայրենասերի վրձնով կերտեց Թուրքիայում իր հայրենակիցների ջարդը պատկերող կտավներ։ Այվազովսկու հետևորդն էր հայ ռեալիստական բնանկարչության հիմնադիր Դ. Բաշինջաղյանը։ Հայ խոշորագույն նկարիչ Վ. Սուրենյանցը հայ արվեստում սկիզբ դրեց և բարձր կատարելության հասցրեց պատմական նկարչությունը, միաժամանակ ռուսական թատրոններում ստեղծեց թատերական նկարչության հիանալի նմուշներ։

Չնայած բարենպաստ պայմանների բացակայությանը, չնայած ցարիզմի դաղութային քաղաքականությանը, Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո

Արևելյան Հայաստանի մի շարք քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս) որոշ զարգացում ստացավ քաղաքաշինական արվեստը։ Կիրառվեցին կանոնավոր հատակագծման սկզբունքներ, բացվեցին նոր փողոցներ, ռուսական կլասիցիզմի ոճով կառուցվեցին որոշ վարչական, ուսումնական ու հասարակական շենքեր, որոնք հայկական տուֆերի օգտագործման շնորհիվ յուրատիպ երանգ ստացան։ Վերակառուցման ու շինարարական որոշ աշխատանքներ կատարվեցին Էջմիածնի վանական համալիրում։

Այսպիսով, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հայկական մշակույթը խոշոր փոփոխություններ կրեց և իր հիմնական ճյուղերում հասավ ժամանակի համաշխարհային քաղաքակրթության պահանջների մակարդակին, ստեղծելով մնայուն արժեքներ։

Հայ ժողովրդի արևելյան հատվածը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ, 1920 թ. կանգնեց զարգացման նոր ուղու վրա, իր դիրքն առավ հազարավոր տարագիր արևմտահայերի և ստեղծեց սովետական իր հանրապետությունը։ Սովետական Հայաստանի ժողովուրդը օրինական ժառանգի իրավունքով տեր դարձավ նախորդ ժամանակաշրջաններում ստեղծված համահայկական ողջ մշակույթին ու հենվելով նրա լավագույն արժեքների վրա, հայրենի հողում կերտեց իր նոր, սոցիալիստական մշակույթը։

ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ И РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

В. С. ЕРКАНЯН

(Резюме)

Присоединение Восточной Армении к России имело большое значение как для социально-экономического, так и для культурного прогресса армянского народа. Благотворное влияние передовой русской культуры дало возможность армянскому народу, опираясь на свои многовековые традиции, создать в XIX в. культуру, которая, преодолев средневековую отсталость, отвечала требованиям времени. Значительные изменения претерпело народное просвещение: в школах стали применяться принципы новой педагогики, был создан ряд благоустроенных образовательных очагов, широкое развитие получили периодическая печать и книгопечатание. Больших успехов добилась новая армянская литература, основателем которой был великий просветитель Х. Абовян; развитие театра пошло по пути реализма; крупные изменения произошли и в других областях искусства. В науке особенное развитие получили арменоведческие дисциплины. Все это создало реальные предпосылки для мощного подъема новой армянской социалистической культуры в годы Советской власти.